



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝



Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիոյան

« 12 » 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 122 - 25

Նախաձեռնող՝

«ՊՐՈ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ

Կոտայքի մարզ, Առինջ, Բ թաղ. 1-ին փ., թիվ 2/1

Գործունեությունը՝

Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի
օգտակար հանածոների արդյունահանման նպատակով
ընդերքի երկրաբանատնտեսագիտական վերագնահատում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 122 - 25
«12» Մայիս 2025թ.

«ՊՐՈ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանատնտեսագիտական վերագնահատման աշխատանքների ուսումնասիրության աշխատանքային ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող
Փաստաթղթի տեսակը՝

«ՊՐՈ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն (այսուհետ՝ ՇՄԱԳ),
Աշխատանքային ծրագիր

Կատեգորիան՝
Տեղադրման վայրը՝

«Ա»
Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, Լիճք բնակավայր

Ներածական մաս. «ՊՐՈ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից նախատեսվող գործունեության նպատակն է Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի՝ նախկինում տրված երկրաբանատնտեսագիտական գնահատականի արդիականացումը: Ընկերությունը, հայցելով ՀՀ Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի երկրաբանատնտեսագիտական վերագնահատման աշխատանքներ իրականացնելու թույլտվությունը, ցանկանում է պարզել դրա ռեսուրսային ու տնտեսական ներկա վիճակին համապատասխանող ներուժը և դրական արդյունքների պարագայում դիմել լիազոր մարմին նաև շահագործման իրավունք ստանալու համար: Հանքավայրի շահագործումը «Սիփան-1» ՍՊ ընկերության կողմից իրականացվել է մինչև 2012 թվականը, 2005թ.-ից սկսած շահագործումն իրականացվել է ստորգետնյա եղանակով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ ա. ենթակետի՝ վերոնշյալ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Նկարագրական մաս. Տերտերասարի ոսկու հանքավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Մեղրի քաղաքից 23 կմ հեռավորության վրա: Մեղրի-Երևան ավտոմայրուղու հետ այն կապված է 4,5 կմ երկարությամբ գրունտային ճանապարհով: Հանքավայրի մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 1500-ից 2100 մ-ի սահմաններում: Հայցվող տարածքի մակերեսը կազմում է 329637 մ²: Նախկինում կատարված հետախուզական աշխատանքներով փաստվել էր, որ հանքավայրում առկա չորս երակաձև հանքամարմիններից միայն երկուսն (թիվ 1 և 3) ունեն արդյունաբերական նշանակություն, որոնք էլ ենթարկվել են մանրագնին հետախուզման:

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար Ընկերության կողմից հայցվող տարածքի սահմաններն իրենց ծայրակետերի կոորդինատներով ներկայացված են ստորև:



Z/Z	Կոորդինատները	
	X	Y
1	4322135.5400	8605850.8290
2	4322164.1800	8605837.2500
3	4322192.7550	8605811.8990
4	4322404.3410	8605713.8600
5	4322482.7620	8605719.4280
6	4322503.4420	8605679.3800
7	4322519.6260	8605675.7800
8	4322543.2330	8605682.9740
9	4322592.7740	8605828.3800
10	4322618.9360	8605883.0690
11	4322647.9010	8605961.9080
12	4322665.5910	8606047.3680
13	4322692.1510	8606095.0040
14	4322756.7250	8606171.7190
15	4322788.1070	8606259.3070
16	4322863.5780	8606351.4130
17	4322839.7370	8606461.3730
18	4322727.6620	8606605.8060
19	4322733.9140	8606731.4310
20	4322699.9960	8606736.6920
21	4322677.8620	8606596.0610
22	4322581.0020	8606402.7820
23	4322551.6300	8606406.5420
24	4322516.8240	8606395.5810
25	4322462.8550	8606400.2790
26	4322394.6670	8606342.5340

Տերտերասարի հանքավայրը կառուցվածքային առումով տեղակայված է Ալգեժորի հանքային դաշտում, որը հարում է Քաջարանի գրաբեն-սինկլինորիումի հարավ-արևմտյան թևին: Տարածքը հիմնականում ներկայացված է ինտրուզիվ ապարներով՝ գրանոդիորիտներով և տուրմալինացած գրանիտ-գրանոդիորիտներով: Անցկացված երկրաբանական աշխատանքների արդյունքում հայտնաբերված են չորս հանքային ջարդոտված, մանրացված ապարների գոտիներ՝ երակային հանքայնացմամբ և հաճախ՝ քվարց-պիրիտային, քվարց-պիրիտ-խալկոպիրիտային և քվարց-կարբոնատ-բազմամետաղային երակներով, որոնք ունեն հյուսիս-արևելյան տարածում, 80-85° անկման անկյուն: Հանքուղային հորիզոններում դիտվում են տարբեր անկյամբ և ամպլիտուդի հետհանքային տեկտոնական տեղաշարժեր: Հանքավայրում ցայտուն արտահայտված է օքսիդացման գոտին՝ մինչև 40-50 մ խորությամբ: Պարփակող ապարները հիդրոթերմալ փոփոխված են: Հանքային մարմինները դրանց հետ ունեն ցայտուն արտահայտված կոնտակտներ (հատկապես ստորին հորիզոններում): Հանքամարմինները բնութագրվում են բարդ ներքին կառուցվածքով և օգտակար տարրերի տեղաբաշխման խիստ անհամասեռությամբ: Սուլֆիդային հանքաքարերի ծավալային զանգվածը կազմում է 2.8 տ/մ³, իսկ օքսիդացած հանքաքարերինը՝ 2.6 տ/մ³: Ապարների միջին ջրահագեցվածությունը կազմում է 0.83%: Երակային լուծույթներում գերակշռող է քվարցը (50-55%), կավային մասնիկներ չեն նկատվում:

Տեղամասը բնութագրվում է պարզ ջրաերկրաբանական պայմաններով: Ջրատար հորիզոնները բացակայում են, իսկ ստորգետնյա փորվածքներում արձանագրվել են աննշան կաթոցներ և թույլ խոնավացում: Հանքավայրի տարածքում առանձնացվում են



ստորգետնյա ջրերի հետևյալ տեսակները՝ հողմահարման կեղևի ճեղքային ջրեր և արմատական ապարների ճեղքային և ճեղքաերակային ջրեր: Այդ ջրերը, բավական փոքր քանակով բացվել են միայն հորիզոնական լեռնային փորվածքներով: Առավելագույն գումարային ջրահոսը բոլոր ստորգետնյա լեռնային փորվածքներից կազմում է 1.32 լ/վրկ: Հորատված 20 հորատանցքերից այդ ջրերը բացվել են միայն մեկում, որտեղ փորձնական արտամղման տվյալներով ջրի հոսքը կազմել է 0.19 լ/վրկ: Հանքավայրի շահագործման դեպքում, լեռնային փորվածքներ հնարավոր ջրահոսը առավելագույնը կկազմի 15.59 լ/վրկ, ստորգետնյա հոսքի մոդուլը՝ 2.6 լ/վրկ /1 կմ² մակերեսի համար/:

Հանքավայրի շահագործման և շահագործական հետախուզման վերաբերյալ «Սիփան-1» ՍՊԸ-ի հաշվետվությունը չի պարունակում հստակ տեղեկատվություն հանքարանում կիրառված ստորգետնյա մշակման համակարգի տեխնիկատնտեսական փաստացի ցուցանիշների և հանքաքարի հարստացման տեխնոլոգիական ռեգլամենտի մասին: Վերոգրյալի և հանքավայրի երկրաբանատնտեսագիտական վերագնահատման հիմնական նպատակի հաշվառմամբ, ինչպես նաև տվյալ օբյեկտին վերաբերող Ֆոնդային այլ նյութերի վերլուծությամբ երկրաբանական առաջադրանքում ամրագրվել է սույն Ծրագրով նախատեսվող աշխատանքների հետևյալ տեսակները.

ա) հանքավայրի վերաբերյալ մինչ օրս ձևավորված երկրաբանական տեղեկատվության հավաքագրում, համակարգում ու թվայնացում (տվյալների էլեկտրոնային բազայի ձևավորում),

բ) առաջին և երրորդ հանքամարմինների թևերի լրահետախուզում՝ հորատանցքերի հորատմամբ,

գ) հանքավայրի վերագնահատման պահի դրությամբ մնացորդային պաշարների հաշվարկ,

դ) հանքավայրի հանքաքարերի հարստացման ռացիոնալ տեխնոլոգիայի հիմնավորում, ինչպես նաև հարստացման տեխնոլոգիական ռեգլամենտի մշակում,

ե) հանքավայրի համար ՏՏՀ-ում ռացիոնալ ճանաչված ստորգետնյա մշակման համակարգի արդի պայմաններում կիրառելիության հիմնավորում,

զ) տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման արդի վիճակին համապատասխանող հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի հիմնավորում,

է) հանքավայրի պաշարների վերաեզրագծում և վերահաշվարկ՝ կոնդիցիաների վերահիմնավորված պարամետրերի օգտագործմամբ:

Այս աշխատանքներն իրականացնելու նպատակով նախատեսվում է կիրառել ժամանակակից համակարգչային ծրագրեր, թվայնացնել վերագնահատվող հանքամարմինները, ուսումնասիրած հորատանցքերի սյունակները, այլ հետախուզափոր վածքների գծապատկերները:

Հանքավայրը նախկինում շահագործվել է և հանքավայրը բացող փորվածքներն արդեն իսկ անցկացված են: Ուսումնասիրության այս ծրագրով նոր փորվածքների անցկացման այլ ծավալ չի նախատեսվում: Շահագործման տեղամասին մոտենալու համար նախատեսված է գննել (ստուգել անվտանգության տեսանկյունից և անհրաժեշտության դեպքում ամրակապել կամ վերականգնել խնդրահարույց հատվածները) 1310 մետր երկարությամբ նախկինում անցկացված փորվածքը:

Շահագործական բլոկ նախապատրաստելու համար անցկացվելու է (հորատանցել) մոտ 70 մետր երկարությամբ նոր փորվածք՝ շտրեկ, նախկինում անցած թիվ 3^բ բովանցքի հորիզոնում, որն անցկացվում է հանքային մարմնով, փորվածքի 6.4 մետր քառ. լայնական կտրվածքի մակերեսով: Փորձնական հանույթ իրականացնելու համար ընդերքի տեղամասից (շահագործական բլոկից) նախատեսված է արդյունահանել 7094.0 տոննա կամ 2534 մ³ ծավալով /խտությունը 2.8 տ/մ³/ ապրանքային հանքաքար, որն էլ նախատեսված է հարստացուցիչ ֆաբրիկայում արտադրական պայմաններում տարբեր ռեգլամենտով հարստացման և համապատասխան ռեգլամենտի մշակման համար:



Հանքաքարի հարստացման տեխնոլոգիական ռեգլամենտի մշակումը հնարավորություն կտա լուծելու հանքավայրի համար ներկայացուցչական որակի հանքաքարը գործարանային պայմաններում տարբեր ռեժիմներով ու ռեագեններով հարստացնելու (փորձարկելու) և դրա արդյունքների վերլուծությամբ տեխնոլոգիական օպտիմալ ցուցանիշները հիմնավորելու միջոցով: Նշված փորձարկումները Ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել «Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատ» ՓԲ ընկերության հարստացուցիչ ֆաբրիկայում: Հարստացման ռացիոնալ տեխնոլոգիայի հիմնավորման և տեխնոլոգիական ցուցանիշների միջև կախվածությունների բացահայտման համար նախատեսված է ձևավորել թվով 3 լաբորատոր-տեխնոլոգիական նմուշ, ոսկու տարբեր պարունակություններով՝ յուրաքանչյուրը 100 կգ զանգվածով, որոնց լաբորատոր ոսումնասիրությունների արդյունքներով պետք է մշակվի հաշվետվություն:

Փորձնական արդյունահանման տեղամաս ընտրվել է 3-րդ հանքամարմնի III-8-C₂ հաշվարկային բլոկը, որը գտնվում է թիվ 1 և 3 բովանցքային հետախուզահորիզոնների միջև և բնութագրվում է ընդերքում հանքաքարի 9227.4 տ պաշարներով և ոսկու 11.90 գ/տ միջին պարունակությամբ: Տվյալների համաձայն՝ ոսկու միջին պարունակությունը հանքավայրի սուլֆիդային հանքաքարերում կազմում է 11.24 գ/տ: Ծրագրով նախատեսվող փորձնական արդյունահանման աշխատանքները նախատեսված են իրականացնել ստորգետնյա հանքում: Ուսումնասիրության ծրագրում դատարկ ապարի արդյունահանում չի նախատեսվում: Բլոկի շահագործման ընթացքում անցկացվող նախապատրաստական և կտրման փորվածքներն ամբողջությամբ անց են կացվում հանքային մարմնով և առաջացած զանգվածն իրենից ներկայացնում է ապրանքային հանքաքար:

Փորվածքի անցկացման համապատասխան գործընթացներում նախատեսվում է օգտագործել Rock Drill MFD90 MAX CL մակնիշի պերֆորատորներ, ППН-1С մակնիշի ապարաբարձիչ մեքենա, BM-5M մակնիշի օդափոխիչ: Պայթեցված ապարը հանքախորշից երկրի մակերևույթ տեղափոխելու համար (մոտավորապես 600 մ) օգտագործվելու է 4-КР մակնիշի էլեկտրաքարշ УВО-0,8 մակնիշի վագոնիկներ:

Վերընթացների անցկացման համար, ինչպես և բացատարման շտրեկի անցկացման դեպքում, նախատեսվում է պայթեցման ոչ էլեկտրական եղանակը և որպես պայթուցիկ նյութ օգտագործվելու է Armex (Magnum): Հորատման համար օգտագործվելու է YT29A մակնիշի պերֆորատոր՝ տվյալ պայմաններում 15 մ/ժամ արտադրողականությամբ: Հորատումը պետք է ուղեկցվի նմուշառմամբ, հորատանցքերի թեքումնաչափությամբ, հորատահանուկի չափմամբ, նկարագրմամբ և համապատասխան արկղերում դրանց տեղավորմամբ:

Սույն ծրագրով նախատեսվում է յուրաքանչյուր բացատարման փորվածքի (բովանցքներ 1 և 3բխ) մուտքի հարևանությամբ ձևավորել մոտավորապես՝ 1600 մ² մակերեսով արտադրական հրապարակ, որտեղ նախատեսված է կառուցել հանքարանից վագոնիկներով տեղափոխվող հանքաքարի բեռնման-բեռնաթափման հանգույց՝ մոտավորապես 200 տ հանրագումար տարողությամբ բունկերներով, ինչպես նաև թեթև ծածկարանի տակ տեղակայվելու են տրանսֆորմատորային ենթակայանը, կոմպրեսորային կայանքն ու տարբեր կարիքների համար օգտագործվելիք 2 վագոն-տնակները: Այդ նպատակով նախատեսվում է օգտագործել գոյություն ունեցող (հանքավայրի հետախուզման և նախկին շահագործման փուլերում ձևավորված) հրապարակները: Երկրաբանական ուսումնասիրության փուլում՝ նախատեսվող գործունեության տարածքում նախատեսվում է արտադրական հրապարակի կազմակերպում երկու հանքուղիների մուտքի մոտ՝ յուրաքանչյուրը 1600մ² մակերեսով:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել է Ընկերության գործունեության արդյունքում առաջացող թափոնների տեսակների և քանակների վերաբերյալ տեղեկատվություն:



Տարեկան առաջանալու է մոտ 3հազ.մ³ դատարկ ապարներ, որոնք կուտակվելու են ստորգետնյա դատարկ խորշերում, որոնց շահագործումն ավարտված է:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ջուրը նախատեսված է օգտագործել արտադրական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներ կհանդիսանան՝ տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում) և հանքաքարի տեղափոխման ընթացքում, ինչպես նաև շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին: Տեխնիկական և տրանսպորտային միջոցները, որոնք պլանավորվում է օգտագործել գործունեության իրականացման ժամանակ, հանդիսանում են չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրները:

Գործունեությունն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն կարող է ունենալ շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային և ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, բուսական և կենդանական աշխարհ/ և Ծրագրի ազդեցության գոտում առկա ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների, կենդանատեսակների, ինչպես նաև բնապահպանական և պատմամշակութային տարածքների վրա (ինչը հավաստվում է փորձաքննական գործընթացում ստացված կարծիքներով): Ազդեցությունների կանխարգելմանն և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներն ամփոփվել են Բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում: Նախատեսվող բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացման համար Ընկերության կողմից նախատեսվել են ծախսեր:

ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության և Ընկերության կողմից լրացուցիչ հիմնավորման համաձայն՝ նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ ռեկուլտիվացիոն/վերականգնման աշխատանքներ չեն իրականացվելու, քանի որ բոլոր աշխատանքները իրականացվելու են ստորգետնյա եղանակով՝ հողային ծածկույթների խախտում և դատարկ ապարների դուրսբերում չի իրականացվելու:

ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննական գործընթացները և 2-րդ հանրային լսման կազմակերպումն իրականացվել են Օրենքով սահմանված կարգով: Մեղրի համայնքի Լիճք և Վարդանիձոր բնակավայրերում իրականացված հանրային լսումների ընթացքում, որին մասնակցել են Լիճք բնակավայրի բնակիչները, շահագրգիռ հանրությունը, բարցրածայնվել է հարց՝ նույն տարածքում այլ Ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման, հետագա արդյունահանման աշխատանքների և Մեղրի համայնքում նախաձեռնող ընկերությունների կողմից նախատեսվող սոցիալական ծրագրերի վերաբերյալ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Սյունիքի մարզպետի աշխատակազմը, Մեղրիի համայնքապետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները (նաև՝ «Հանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը), ներքին գործերի, առողջապահության, ԿԳՄՍ նախարարությունները, կադաստրի կոմիտեն, որոնց կողմից ներկայացված կարծիքները և առաջարկությունները հաշվի են առնվել ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում: Ստացված կարծիքները «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջադրված դիտողությունների և առաջարկությունների հետ, պարզաբանող գրությամբ վերադարձվել են Ընկերությանը լրամշակման, սակայն փաթեթը շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացվել թերի լրամշակված: Մի շարք դիտարկումների հետ մեկտեղ Ընկերությանը պահանջվել է ներկայացնել նաև տեղեկատվություն՝ հայցվող տարածքի հողերի պատկերավորման, դրանց նպատակային և գործառնական նշանակությունների, սեփականության ձևերի վերաբերյալ:



Նշվածի վերաբերյալ որպես հիմնավորում Ընկերության կողմից ներկայացվել է ՀՀ Կադաստրի Կոմիտեի (Սյունիքի մարզային ստորաբաժանում) տեղեկանք, որում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ նախատեսվող գործունեության համար հայցվող տարածքի կոորդինատները ներառում են՝ 09-039-2256-0001 (հատուկ պահպանվող տարածքներ նպատակային նշանակության բնապահպանական անտառ և անդունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս) և 09-039-2256-0002 (բնապահպանական այլ հողատեսքի հողամաս) ծածկագրերը: Իսկ տարածքի անմիջական հարևանությամբ բնապահպանական նշանակության հողեր են, մինչդեռ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Հայցվող տարածքն ամբողջությամբ գտնվում է Արևիկ ազգային պարկի սահմաններից դուրս»: Հարկ է նշել, որ հայցվող տարածքում հատուկ պահպանվող տարածքների և անտառային հողերի առկայությունը ևս պարզվել է փորձաքննության գործընթացում:

Պարճառաքանական մաս. Փորձաքննության ներկայացված փաթեթի ուսումնասիրության և փորձաքննության արդյունքով վեր են հանվել հետևյալ փորձաքննական հիմնավորումները.

1. Տերտերասարի ոսկու հանքավայրի մոտեցման գրունտային ճանապարհն անցնում է «Արևիք» ազգային պարկի տարածքով, հանդիսանում է հատուկ պահպանվող տարածքների (նպատակային նշանակության), բնապահպանական (գործառնական) նշանակության հող, համապատասխանում է «Հողային օրենսգրքի» 20-րդ հոդվածի 1-ին մասին:

2. ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային հուշարձանները բացակայում են և ՇՄԱԳ հաշվետվությունում չի դիտարկվել վերջիններիս վրա սպասվող ազդեցությունները: Սակայն ԿԳՄՍ նախարարության կարծիքում ներկայացվել է, որ դիտարկվող տարածքում առկա են ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում հաշվառված մի շարք հուշարձաններ: Հայցվող տարածքում են գտնվում ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2322-Ն որոշմամբ հաստատված ցուցակում հաշվառված (ամրոց, Ք.ա. 1-ին հազ., պետական ցուցիչ՝ 8.92.1, գյուղատեղի Տերտերասար, 16-18-րդ դարեր, պետական ցուցիչ՝ 8.92.1.1, հանքախորշեր, Ք.ա. 1-ին հազ.–միջնադար, պետական ցուցիչ 8.92.1.2) հուշարձանները, որոնք ժամանակին մասնակի վնասվել են նախկին տնտեսվարողների գործունեության հետևանքով: Ծրագրի ազդեցության տարածքում է գտնվում նաև Տերտերասարի միջնադարյան գերեզմանատունը (պետական ցուցիչ՝ 1 8.92.1.1.1), որտեղ պահպանվել են բազմաթիվ միջնադարյան խաչքարեր ու արձանագիր տապանաքարեր: Վերոնշյալ հուշարձանների ուսումնասիրություններն ու դրանց գիտական, գեղարվեստական, պատմական նշանակությունը կարևորվում է պատմամշակութային ժառանգության պահպանության տեսանկյունից:

3. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Արևիք» ազգային պարկի պարկի պահպանման գոտում, համաձայն ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 15-ի N 1209-Ն որոշման Հավելված N 1-ով սահմանված «Արևիք» ազգային պարկի կանոնադրության «IV. Պարկի պահպանման գոտու ռեժիմը» գլխի 18-րդ կետի՝ արգելվում է տնտեսական գործունեություն, որը կարող է սպառնալ այդ տարածքների էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, զիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

4. ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված և գնահատված չէ փորձաքննական հանույթի (ստորգետնյա եղանակով) տեղամասի բացման ժամանակ պայթեցման աշխատանքների



հնարավոր ազդեցությունները՝ անմիջականորեն սահմանակից «Արևիք» ազգային պարկի պահպանության ներքո գտնվող արժեքավոր էկոհամակարգերի վրա:

5. Հայցվող տարածքում կարող են հանդիպել ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված «Սոխ եգորովայի» կրիտիկական վիճակում գտնվող տեսակը և ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված «Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկ» բզեզը, իսկ նշված կոորդինատներով տարածքի մոտակայքում «Մենմոզինա կամ սև ապոլոն», «Մորեխ հայկական», «Կապանյան երկարաբեղիկ», «Ալկոն կապտաթիթեռ», «Ալպիական ճայ», «Շելկովնիկովի կուտորա» և «Արաքսյան գիշերաչղջիկ» կենդանական տեսակները և երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված աշխատանքները կարող են խախտել նշված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանները և էկոհամակարգերի կայունությունը:

6. Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից ստացված գրության համաձայն տարածքը առանձնացված (սահմանազատված) չէ և նշագրված չէ կադաստրային էլեկտրոնային քարտեզում և կադաստրային քարտեզով հաշվառված է որպես հատուկ պահպանվող տարածք: Խնդրին կարելի է անդրադառնալ «Արևիք» ազգային պարկի սահմանների ճշտման և կադաստրային քարտեզում սահմանների հստակեցման աշխատանքների ավարտից հետո:

7. ՇՄԱԳ հաշվետվությունում չի ներկայացվել հայցվող տարածքի բոլոր ջրային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ թարմացված տվյալները և հողային ռեսուրսների աղտոտվածության տվյալները:

8. ՇՄԱԳ հաշվետվությունում չի ներկայացվել Կառավարության 2021թ.-ի օգոստոսի 18-ի «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման ել վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» N1352-Ն որոշման պահանջներին համապատասխան խախտված հողատարածքների (արտադրական հրապարակներ) կարգաբերման/վերականգնման միջոցառումների ծախսատեսակները (ռեկուլտիվացման տեխնիկական և կենսաբանական փուլերի համար):

Հիմք ընդունելով վերոնշյալ փորձաքննական հիմնավորումները՝ փորձաքննական գործընթացի արդյունքով կազմվել է փորձաքննական բացասական եզրակացություն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները և առաջնորդվելով Օրենքի 17-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով՝ «ՊՐՈ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանատնտեսագիտական վերագնահատման աշխատանքների ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝

Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան